

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՀՈՒՆԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԹԵՆԻՈՍԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԹԵՆԻՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՀՈՒՆԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

Ալեքսանդրիա

Սրտանց կշնորհավորենք Ձերդ Սրբության ընտրությունն և գահակալությունը որպես Պապ և Պատրիարք Ալեքսանդրիո և համայն Աֆրիկայի հույն ուղղափառ պատմական սուրբ Եկեղեցու:

Թող Աստված կենաց երկար տարիներ ու քաջառողջություն շնորհե Ձեզ, որպեսզի իմաստությամբ և հոգևոր բարձր հեղինակությամբ շարունակեք գլխավորել Ձեր պատմական Աթոռի առաքելությունը մեր օրերի քրիստոնյա աշխարհում:

Հայ Առաքելական Եկեղեցու բազմադարյան կենտրոն Սուրբ Էջմիածնից և Մեր սրտից Ձեզ եղբայրական սիրո ողջույն ի Քրիստոս:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 մարտի 1987 թ.